

ՓՈԽՆԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Սկստի ունենալով Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջեւ բարեկամական հարաբերությունները եւ հիմք ընդունելով երկկողմ տնտեսական համագործակցությունը ընդլայնելու փոխադարձ ցանկությունը, երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների միջեւ Հայաստանի տնտեսական զարգացմանը աջակցելուն ուղղված բանակցությունները համաձայնեցին հետեւյալի շուրջ.

ՀՈՂՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության Կառավարության դիմումի համաձայն, Իրանի Իսլամական Հանրապետությունը համաձայնում է տնտեսական զարգացման երկկողմ համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը ներառել իր զարգացման օգնության մեջ:

ՀՈՂՎԱԾ 2

Իրանի Իսլամական Հանրապետությունը սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է երկու միլիոն հարյուր ինսուսումեկ հազար դոլար զարգացման օգնություն՝ որպես դրամաշնորհ:

ՀՈՂՎԱԾ 3

Սույն Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը զարգացման օգնությունը կփոխանցի Երեւանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ղեկավարի եւ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից բացված համատեղ հաշվին:

Համատեղ հաշվից գումարների բաց թողնման եղանակն ու մեխանիզմները լրացուցիչ կփոխհամաձայնեցվեն այլ փոխըմբռնման հուշագրով:

ՀՈՂՎԱԾ 4

2-րդ հոդվածում նշված զարգացման օգնությունը Հայաստանի Հանրապետությանը կտրամադրվի եւ պետք է օգտագործվի հետեւյալ նպատակներով.

ա) Հայաստանի Հանրապետության կողմից առաջարկված այն ծրագրի կամ նախագծի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ամբողջովին կամ մասամբ ապահովում, որոնք կիրառործվեն իրանական ընկերությունների կամ հաստատությունների կողմից,

բ) Իրանի Իսլամական Հանրապետությունից զարգացման նշանակության ապրանքների եւ սարքավորումների ձեռքբերման ծախսերի ամբողջովին կամ մասամբ ապահովում,

գ) Իրանի Իսլամական Հանրապետության ֆինանսական հաստատությունների կողմից այն ծրագրի կամ նախագծի իրագործման նպատակով տրամադրված վարկերի տոկոսի դրույքաչափի տարբերության եւ ապահովագրության ծախսերի վճարում, որոնք կիրականացվեն իրանական ընկերությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 5

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պաշտոնապես

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը կներկայացնի մեկ կամ մի քանի բարձր առաջնայնության ծրագրեր, որոնցից մեկը կամ մի քանիսը կընտրվեն իրագործման համար:

ՀՈՂՎԱԾ 6

5-րդ հոդվածում նշված ծրագրերը կիրականացվեն իրանական ընկերության կամ ընկերությունների կողմից, որոնք սույն Փոխըմբռնման հուշագրում կվկայակոչվեն որպես կապալառու:

ՀՈՂՎԱԾ 7

Իրանական ընկերության կամ ընկերությունների ընտրությունը կիրականացվի սահմանափակ մրցութային կարգով:

ՀՈՂՎԱԾ 8

Ծրագրի համար պահանջվող սարքավորումները եւ նյութերը կապահովվեն իրանական աղբյուրներից: Անհրաժեշտության դեպքում, ծախսերի նվազեցման կամ աշխատանքների արագացման նպատակով նյութերի առավելագույնը 30 տոկոսը կարող է ապահովվել այլ աղբյուրներից:

ՀՈՂՎԱԾ 9

Անհրաժեշտության դեպքում, 2-րդ հոդվածում նշված զարգացման օգնությունից կարող է ֆինանսավորվել ծրագրի նախնական ուսումնասիրությունը, որը կիրականացվի իրանական խորհրդատվական ընկերության կողմից:

ՀՈՂՎԱԾ 10

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2-րդ հոդվածում նշված զարգացման օգնություն վերահսկելու եւ հետեւելու նպատակով կսահմանի մարմին, որը կանոնավոր կապի մեջ կլինի շահագրգիռ կողմերի եւ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

ՀՈՂՎԱԾ 11

Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը զարգացման օգնությունը կապալառուին վճարում է 10-րդ հոդվածում նշված մարմնի դիմումով: Նման վճարումը կարող է կատարվել մի քանի մասնաբաժիններով:

ՀՈՂՎԱԾ 12

Հայկական կողմի եւ կապալառուի միջեւ որեւէ տարաձայնություն առաջանալու դեպքում նրանք այդ մասին տեղեկացնում են Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը: Այդ դեպքում զարգացման օգնությունից վճարումը պայմանավորվում է կողմերի միջեւ տարաձայնության կարգավորմամբ:

Սույն Փոխըմբռնման հուշագիրը կատարված է Թեհրան քաղաքում 2006 թվականի հուլիսի 5-ին, համապատասխանաբար՝ արեգակնային օրացույցի 1385 թվականի թիր ամսվա 14-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն եւ անգլերեն: Ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են եւ ստորագրված են երկու երկրների Կառավարությունների անունից ներքոստորագրյալների կողմից:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. օգոստոսի 10-ից:

MEMORANDUM OF UNDERSTANDING
Development Aids of the Islamic Republic of Iran to the Republic of
Armenia

With view to the amicable relations between the Government of the Republic of Armenia and Government of the Islamic Republic of Iran and the based on the mutual desire for the expansion of bilateral economic cooperation, the high ranking officials of the two countries held negotiations to assist the economic development of Armenia and the following understanding achieved:

Article 1

Upon the request of the Republic of Armenia, the Islamic Republic of Iran agreed in the framework of bilateral economic development cooperation to include the Republic of Armenia in its development aids.

Article 2

The Islamic Republic of Iran agreed in the framework of the provisions of this Memorandum of Understanding to allocate the amount of two million and one hundred and ninety one thousand US Dollar for development aids as a grant to the Republic of Armenia.

Article 3

Following the signing of this Memorandum of Understanding, the Ministry of Foreign Affairs of the Islamic Republic of Iran shall deposit the development aids into a joint account in the name of head of the mission of the Islamic Republic of Iran in Yerevan and Minister of Foreign Affairs of Armenia.

The method and mechanism of withdrawal from the joint account shall be subsequently agreed mutually through another memorandum of understanding.

Article 4

The mentioned development aids as for article 2 shall be used and granted to the Republic of Armenia for the following purposes:

A-To provide the total or part of financial resources needed for project or program proposed by the Republic of Armenia that shall be executed by the Iranian companies or institutions.

B-To provide the total costs or part of the costs for purchasing development goods or equipment from the Islamic Republic of Iran.

C- To provide the difference of interest rate and insurance cost for the credits given by the financial institutions of the Islamic Republic of Iran for execution of a program or project by the Iranian companies.

Article 5

Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia through an official note shall introduce one or number of projects of higher priority to the Ministry of Foreign Affairs of the Islamic Republic of Iran, among

which one or number of projects shall be selected for execution.

Article 6

The mentioned projects in article 5 shall be performed by an Iranian company or companies that in this Memorandum of Understanding shall be referred as "contractor".

Article 7

Selecting the Iranian company or companies shall be made through limited tendering method.

Article 8

The required equipment and materials of the project must be provided from Iranian resources. In case of exigency, for the purpose of cost reduction or speed of work, maximum 30% of the materials may be provided from other resources.

Article 9

In case of need, the feasibility studies of the project can be financed from development aids as stated in article 2, which shall be performed by an Iranian consulting company.

Article 10

Government of the Republic of Armenia shall introduce an authority for supervision and follow up the development aids as for in article 2 in order to be in regular contact with the concerned parties as well as the Ministry of Foreign Affairs of the Islamic Republic of Iran.

Article 11

Ministry of foreign affairs of the Islamic Republic of Iran shall pay the development aids to the contractor following the request of the authority as for article 10. Such payments might be made in number of installments.

Article 12

In case of any dispute arising between the Armenian side and the contractor, both sides inform the case to the Ministry of foreign affairs of the Islamic Republic of Iran. In such case the payment of the development aids is subject to the settlement of the dispute between the parties.

This Memorandum of Understanding is done on 5 July 2006 corresponding to 14 Tir 1385 H.S, in Tehran, in two copies each Armenian, Persian and English languages. Both texts are equally valid and signed by the following signatories on behalf of the Governments of both countries.

The Memorandum of Understanding has entered into force on 10.08.2006.

